

Հաճելի չէ, որին թողկ
 Երևում են բոլոր մարդիկ.
 Միայն ի՜նքն է մեծ, ի՜նքն է հանճար.
 Նրան համոզել զուր կ'աշխատիք,
 Թէ նա մեծ չէ, ալլ միայն երկար:

Ուրեմն խնդիրը պարզւում է նորանով, որ մեծ պէտք է ասել խելքով և հոգով մեծին, բայց մարմնով մեծին պէտք է ասել երկար: Որոշումը սրամիտ է: Բայց միայն մի պայմանով, որ սատիրը դորանով իւր վերջին խօսքը ասած լինէր, առանց հարկաւորութիւն դրալու դիմել օգնութեան Եզոպոսեան կատակներին:

ԼՈՒՍԻՆԻ

ԲԱՔՈՒԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Սորանից ճիշդ 25 տարի առաջ, Բաքուի հալ հասարակութեանը տիրում էր նույն ուրախութիւնը, նույն ոգևորութիւնը, ինչ ամսուս 21-ին, միայն այն ղանադանութեամբ, որ նոցա շարժառիթները տարբեր էին: Այն ժամանակաւ ոգևորութեան պատճառը այն պայծառ աստղն էր, որ երեսց Բաքուի հօրիզոնի վերայ և հրաւիրեց մտածող հային լուսաւորութիւն և մարդասիրութիւն տարածել իրանց համազգիներին մէջ: Այդ աստղը ալժմեան Մարդասիրական Ընկերութիւնն է, որի կանոնադրութիւնը նախկին փոխարքայ Նորին Կալսերական մեծութիւն իշխան Միխայէլը բարեհաճեց հաստատել մայիսի 21-ին, 1864 թ.: Ո՞վ էր այն մարդը, այն ուժը, որը ալնպիսի լուսաւոր ժամանակ, ինչպիսին էր վաթսուհական թւականը, բայց մի ալնպիսի քնտ ընկած դաւառական քաղաքում, ինչպէս էր Բաքուն, որը իրաւամբ կոչւում է եղել Կովկասի Սիբիր, ոգևորած մարդասիրական գաղափարով, երևան է գալիս խաւար ամբոխի մէջ մարդասիրութիւն և լուսաւորութիւն տարածելու: Դա՛ հանգուցեալ բժիշկ Դաւիթ Ռոստոմեանցն էր: Այդ հազագիւտ մարդու մասին շատ քիչ տեղեկութիւններ կան. ինչ որ էլ նորա մասին պիտի ասեմ, այդ քաղում եմ Ընկերութեան քարտուղար պ. Ա. Գալստեանցի տեղեկագրից: Յանկալի կը լինէր, որ նոքա, որոնք բաղդ են ունեցել նորա հետ ընկեր, բարեկամ կամ պաշտօնակից լինելու, շտապէին նորա մանկական, ուսանողական և բժշկական կեանքից տեղեկութիւններ հաղորդել Ընկերութեան քարտուղարին, որը տպագրութեան համար պատրաստում է ընդարձակ տեղեկագիր, որի մէջ անշուշտ կը մտնի և հանգուցեալ հիմնադրի կենսագրութիւնը:

Հանգուցեալ բժիշկ Դաւիթ Ռոստոմեանցը ծնւել է Թիֆլիսում, 1820 թ. և վախճանւել է 1869 թ., ուրեմն 49 տարեկան հասակում: Նա իւր

բժշկական ուսումը ստացել է Մոսկւայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, և աւարտել է 1842 թ., ուրեմն 22 տարեկան հասակում։ Դորանից լիտոյ անմիջապէս բժշկական պաշտօնով զալիս է Նոսիւալ գաւառը, իսկ մի տարուց լիտոյ՝ տեղափոխում են Նորան Բաքուի գաւառը։ Այստեղ երեսցել էին ալդ ժամանակ զանազան տարափոխիկ և վտանգաւոր հիւանդութիւններ, ինչպիսին է խօլերան, որը սկզբում տարածւել էր Սալեանում, Լենկօրանում և ապա Շամախու գաւառում։ Ռոստոմեանցին են լանձնում դոցա առաջն առնելը, որը և կատարում է ամենայն ճշգրութեամբ 1849 թ. նշանակւում է նահանգական բժշկի օգնական, իսկ բժշկի մահից լիտոյ ինքն է վարում չորս տարի Նորա պաշտօնը։ Բացի դորանից, նա երկու տարի, 1850—1852 թ., վարել է քաղաքային բժշկի և կենդանաբուժի պաշտօն, իսկ 10 տարի շարունակ կատարել է ուսուց սբ. Նունէ չորս-դասեան զպրօցում բժշկի պաշտօն։ 1868 թ.ին ստանում է Բաքուի նահանգական բժշկի պաշտօն, որը և վարում է մինչև իր վախճանը։ Այդ անխոնջ մշակի գլխաւոր և արժանաւոր չափութիւններն, որոնցով նա կարողանում էր ազդել շրջապատողներին վերալ և գրաւել ճոցա համակրութիւնը դէպի իրան՝ էին Նորա զարգացումը, լեզուն, զգալուն սիրտը, կարեկից և փափուկ բնաւորութիւնը։ Նա կարեկցում է եղել ամեն մէկ թշուառի, երեք չի զլացել հասցնել իւր բժշկական օգնութիւնը կարօտեալներին. ալդպիսիների համար Նորա դուռը միշտ բաց է եղել։ Պատելով գաւառները, նա ի մօտոյ ծանօթանում է հայերի թշուառ դրութեան հետ. նա տեսնում է, որ Նորա թշնամին սղիտութիւնն է, նա կարօտ է լոյսի։ Եւ ահա ալդ ժամանակ Նորա մէջ լղանում է ալժման Մարդասիրական Ընկերութեան գաղափարը։ Նա ալս միաբը լալտնում է հանգուցեալ Մովսէս Զորաբեանցին և ուրիշներին և գրաւում է ճոցա համակրութիւնը և ուշադրութիւնը։ Այդ պարոններից Մովսէս Զորաբեանցը լինում է Ռոստոմեանցի գաղափարների ջերմ պաշտպանող և տարածողը։ Այդ երկու անձնաւորութիւնները կազմում են Ընկերութեան կանոնադրութիւնը և ուղարկում են Նորան հաստատութեան, որը և ստացւում է մի քանի փոփոխութիւններով 1864 թ. մալիսի 21-ին։ Այդ ժամանակ հիմնադիր գրւում են ութ հոգի, բաց մինչև հաստատուելը աւելանում են կրկին հինգ հոգի և ալդպիսով դառնում են տասներեք հոգի։ Սոքա վեր են դնում 12,650 ր., որը և կազմում է հիմնական զրամագլուխ։

Ահա հիմնադիր պարոնների անուն և աղանդները։

- 1) Ռոստոմեանց Դաւիթ Յարութիւնեան, բժշկ. (Տփլիսեցի)։
- 2) Տէր-Ղուկասեանց Ալէքսանդր Արտեմիչ (Տփլիսեցի)։
- 3) Կրասիլնիկեանց Ներսէս Նիկիտիչ (Շուշեցի)։
- 4) Զորաբեանց Մովսէս Զորաբեան (Շուշեցի)։
- 5) Շահգիդանեանց Մուսալէլ Դանիէլեան (Բաքուեցի)։

- 6) Թումալեանց Գրիգոր Հայրապետեան (Շուշեցի):
- 7) Ալվադեանց Սարգիս Կիրիլի:
- 8) Տէր-Գրիգորեանց Սարգիս Տէր-Յովհաննիսեան:
- 9) Լալալեանց Գէորգ բէգ Պօղոսեան (Շամախեցի):
- 10) Ապրեսեանց Յակովբ Սահակեան:
- 11) Հախումեանց Օհանջան Գրիգորեան (Շուշեցի):
- 12) Գրիգորեանց Սարգիս Յարութիւնեանց:
- 13) Աղամեանց Դաւիթ Յովհաննիսեան:

Այժմ դիմենք Ընկերութեան բուն գործունէութեան: Այս դէպքում ամենից պերճախօսը թւանշաններն են, որ հարկատու եւ համարում ղենչ չպս տեղ, քաղելով նոցա պ. ատենադպիր Գալստեանցի տեղեկագրից:

Մարդասիրական Ընկերութիւնը 25 տարւաւ ընթացքում ստացել է 185.324 ռ. 33 կ. մուտք՝ հետեւեալ աղբիւրներից.

	րուբլ.	կ.
13 հիմնադիր անդամներից (12.650 փոխարէն)	9.650	—
4 պատուաւոր անդամներից	4.000	—
317 անփոփոխ անդամներից	32.625	—
869 տարեկան անդամներից	4.459	—
Դրամադ. տոկոսիւք եւ արդիւնք վաճառականութիւնից .	62.294	41
Կտակած գումարների	4.280	—
Նւիրատութիւններ	4.954	94
Ներկապցումներից	2.763	19
Տպարանից եկամուտ	5.397	81
Տպարանի վաճառումից	675	—
Շինութեան նկուղից եւ սենեակից վարձ	2.955	—
Ձեռագործների վաճառումից	1.298	6
Գրքերի վաճառումից	106	19
Աշակերտներից թոշակադրամ	1.340	—
Շոգենաւակից արդիւնք	1.025	—
Շոգենաւակի վաճառումից	1.200	—
Ծիսական հոգաբարձութիւնից	13.341	65
Նոր շինութեան համար ժողոված գումար	29.636	99
Պաշտանատու գումարների	1.490	84
Դրամադրանական գումար	1.977	72
Անչափ աղբիւրներից	883	53

25 տարւալ ընթացքում ծախս եղել է 122.623 ռ. 10 կ. հետեւալ առարկաների վերալ.

	րուբլ.	կ.
1) Բաքուի դպրոցների վերալ.	48.147	33
որից 34.805 ռ. 68 ռ. Ընկերութեանն է, մնացածը հոգաբարձութեան և մասնաւոր մարդկանց.		
2) Գիւղական և քաղաքալին դպրոցներին նպաստ . .	7.411	10
3) Որդեգրաց օժանդակութիւն	14.645	30
4) Ողորմութիւն աղքատաց Բաքուի, Գանձակի, Սա- մարալ և Զուղալի	2.099	22
5) Տան վարձ դպրոցների և գրատան համար	1.635	—
6) Տպարանի վերալ ծախքեր	7.447	49
7) Հին շինութեան վերալ ծախք	7.715	93
8) Շինութեանց կարկատանաց վերալ	4.600	31
9) Նոր շինութեան վերալ ծախք	16.370	53
10) Գրատան վերալ ծախք՝ գրքերի, լրագիրների և ալլն. .	5.544	81
11) Գործավարական և տնտեսավարական ծախքեր . .	5.332	18
12) Բանկին տուկոս.	2.321	10
13) Անահնունելի ծախքեր	352	80
Աւելացնենք սորա վերալ և զանազան դէպքերում ստա- ցած վնասները.	6.765	—
Կը ստանանք ընդամենը ծախսած գումար.	128.388	10
Այժմ Ընկերութիւնը ունի չարժական և անչարժ կալքով. .	62.370	50

Ուշադրութեամբ նայելով Ընկերութեան գործունէութեան վերալ, մենք տեսնում ենք, որ նա իւր բոլոր ուժը չի կենտրոնացրել մի բանի վերալ և մի տեղում, ալլ նա իւր բարոյական և նիւթական ուժերը տարածել է ալլն տեղերում և ալլն բաների վերալ, որտեղ և ինչ բանում կարիք է զգացուլ. Գոցանից ամենամեծ նպաստը ստացել են ուսումնարանները, ալլ խօսքով, գրադրութիւն տարածելուն են գործադրել և ալլն էլ գլխաւորապէս քաղաքներում. միմիայն վերջին ժամանակներս է Ընկերութիւնը լուրջ ուշադրութիւն դարձնում գիւղական դպրոցների վերալ: Մեր կարծիքով, ժամանակ է վերացնել քաղաքալին դպրոցներին հասանելիք նպաստը. քաղաքները իրանք կարող են իրանց դպրոցը ապահովացնել, նամանաւանդ Բաքուն, որի առատաձեռն ժողովուրդը լալտնի է ամենուրեք. ալլ գումարները գլխաւորապէս պէտք է գործադրել գիւղական դպրոցների վերալ, որոնց միջոցները սուղ են: Միմիայն Բաքուի դպրոցներին լատկացրած նպաստով կարելի է զիւղերում 10 դպրոց բանալ: Մենք ապտեղ չենք պնդում քաղաքալին դպրոցներին նպաստ չը տալուն, ոչ. մեր ցանկութիւնն է, որ չափաւոր նպաստենք, եթէ չեն կարող միանգամից դադարեցնել. Գա-

ղաքները ունին շատ եկամուտի աղբիւրներ. օրինակ, միայն Բաքուի ուսումնարանները ժամանակով կարող են ապահովել եկեղեցիներով, եթէ ժողովուրդը աշխատի երեցփոխ ընտրել ներկալ երեցփոխի նման անշահասէր, անխարդախ և ազնիւ մարդկանց:

Օգնել դպրոցներին, նամանաւանդ գիւղական դպրոցներին, մի շատ համակրելի բան է. բայց դորա հետ միասին հարկատու է հսկել, որ այդ նպաստը ճիշդ իւր նպատակի համար գործադրուի Պատահել են դէպքեր, որ Ընկերութիւնը ուղարկել է նպաստ, հաւատալով միանգամայն այս կամ այն պարոնի խօսքին, այն ինչ դպրոցը իրօք գոյութիւն չի ունեցել. կամ ուղարկուած է աշակիսի գիւղական դպրոցներին, որտեղ կանոնաւոր դպրոց չը կա, ալ գիւղի քահանան, ժողովելով մի հինգ-վեց տղայ սովորեցնում է Սաղմոս և Աւետարան: Այդ տեսակ տեղերին օգնելը միանգամայն աւելորդ է, որովհետև Սաղմոս և Աւետարան, առանց Ընկերութեան նպաստի էլ, կը սովորեցնուի, ինչպէս ալը անում են ամեն գիւղերում քահանաները և տէրացոնները, որի համար ուսուցիչը կը ստանալ գիւղացիներից իւր վարձը: Մենք կը կամենալինք, որ Ընկերութիւնը նպաստէ միայն աշակիսի դպրոցներին, որոնց եկամուտի վերաջ եթէ աւելացնելու լինենք Ընկերութեան նպաստը, կը պահւի մի կանոնաւոր ուսուցիչ: Կամ եթէ կամենում են թրքախօս գիւղերում դպրոցներ բանալ, իրանք ուսուցիչներ վարձեն, ուղարկեն և միայն մի մասնաւոր ծախս գիւղացիներից պահանջեն. հակառակ դէպքում, շատ ապարդիւն կ'անցնի:

Քսանհինգ տարուայ ընթացքում Ընկերութիւնը նպաստել է 15 դպրոցի, որոնցից 6-ին ոչինչ չէ ուղարկում ալժմ, իսկ մնացածները շարունակում են ստանալ իրանց նպաստը: Յիշեալ դպրոցներից մի քանիսին օգնել է փողով, մի քանիսին էլ թէ Ընկ. դրամով և թէ դասագրքերով: Ներկայումս օգնում է միայն փողով:

Նրկորդ տեղը ծախսի մէջ բռնում է տան վարձը և ուսումնարանի համար չարմար շինութիւն կառուցանելը: Վերջինս մօտիկ ապագայում պիտի կազմի նորա պարծանքը: Նա դեռ չէ վերջացած և սպասուում է հասարակութեան օգնութեան:

Յուցակում երրորդ տեղն է բռնում որդեգրների վերայ արած ծախսը, որը հասնում է մի պատկառելի թւանշանի, այն է 14.645 ր. 30 կ.: Որդեգիրներ ունեցել է շարունակ մինչև ներկայ թւականը. հիմնած տարիներից սկսած մինչև 80 թւականը, գրեթէ գլխաւոր ուշադրութիւնը դարձրած է եղել դոցա վերայ, միայն ներկայումս է, որ ունի միայն մի որդեգիր:

Մարդասիրական Ընկերութիւնը իր 25 տարուայ դոյութեան ընթացքում պահել է թէ Ռուսաստանի և թէ արտասահմանի զանազան դպրոցներում 22-ից աւելի որդեգիրներ: Ահա ալ որդեգիրների անուն, ազգանունները և նոցա որդեգրութեան տարեթիւը:

1) Գաբրիէլ Ռոմանովսկի 8 տարի, 2) Աւագ Գրիգորեանց (ալժմ քահանայ) 5 տարի, 3) Աղէքսանդր Քալանթար (գիւղատնտես) 1 տարի, 4) Միքաէլ Տէր-Օհանեանց (բժիշկ) 4 տարի, 5) Ներսէս Աբէլեանց (տեխնօլոգ) 12 տարի, 6) Ա. Գալստեանց (տեսուչ) 2 տարի, 7) Սարգիս Մեհրաբեանց (տեխնիկ) 8 տարի, 8) Տիկին Մելանիկ 2 տարի, 9) Տէր-Մարկոսեանց 2 տարի, 10) Սարգիս Ծատուրեանց (աւարտել է Պետերբ. համալս. ֆիզիկո-մատեմատ. բաժնում) 14 տարի, 11) Գասպար Յակովբեան 2 տ., 12) Նիկողայոս Փիրումեանց 4 տարի (ուսուցիչ), 13) Բագրատ Եղորեանց 10 տարի (ուսուցիչ), 14) Միքաէլ Ղալաբեգեանց 3 տարի (ատենապետ), 15) Տ. Նաւասարդեանց 3 տարի (գրասէր), 16) Գէորգ Տէր-Սարգսեանց 2 տարի, 17) Լևոն Աթաբէկեանց 2 տարի (վախճանած), 18) Գիւրջեանց 2 տարի, 19) Ղարաջեանց 3 տարի. մնացածները կամ կամով ևն թողել ուսումը կամ վախճանել են:

Ընկերութեան մնացած գործունէութիւնը ամփոփւած է աղքատներին օգնելու, գրադարան-ընթերցարանի և տպարանի հիմնելով. մնացածը անշան է: Աղքատներին և չքաւորներին օգնել է մինչև ալժմեան աղքատացի հիմնաւորը, ուր ալժմ ղեկավարած են մօտ 20 ընտանիք:

Գրադարան-ընթերցարանը կարող է նմանապէս նորա պարծանքներից մէկը համարւել: Նա հիմնւած է ժողովրդի մատուր պահանջներին բաւականութիւն տալու և նորանից ալժմ օգտւում են ամենքը, առանց ազգի և կրօնի խտրութեան: Մինչև 85 թ. նա մի առանձին դեր չէր խաղում և դառնում էր շատ անկանոն դրութեան մէջ. ներկայումս կարգի է բերւած և կազմւած է մի լանձնաժողով նորա վերալ հսկելու, ցուցակագրելու և ղաժը և միևնույն ժամանակ միջոցներ դառնելու նորան հարստացնելու համար:

Մինչև լանձնաժողովի հիմնւելը գրադարանը ունէր 3506 հատոր գիրք, արժողութեամբ 3301 ր. 86 կ. ներկայումս, շնորհիւ լանձնաժողովի ջանքերի, գրքերի թիւը հասցրած է 4600 հատորի, արժողութեամբ 5575 ր. և, բացի դորանից, խնայած ունի 1800 ր. որը չահեցնւում է Ընկերութեան փողերի հետ: Ալժմ ընթերցարանը ստանում է թէ հալերէն և թէ ռուսերէն լեզուներով 30 պարբերական հրատարակութիւններ, որոնցից 9 հալերէն է, մնացածները՝ ռուսերէն:

Իւր գոյութեան ամբողջ ընթացքում Ընկերութիւնը ունեցել է սովորական և արտասովոր նիստեր 578 անգամ, ընդհանուր ժողովներ 22 անգամ. իսկ ժողովներին մասնակցել է մօտ 1000 հոգի. 25 տարեալ ընթացքում Ընկերութիւնը ունեցել է 6 նախագահ, 3 գանձապահ, 6 ատենադպիր և 26 խորհրդական անդամներ:

Այս ընդհանուր տեսութիւնից չեսող, հարկաւոր եմ համարում ղեկ ալստիղ բոքելեանի կարծառօտ նկարագրութիւնը:

Մալխի 21-ին տօնւոց չքեղ կերպով «Մարդասիրական Ընկերութեան» 25-ամեակը, այն ընկերութեան, որ իւր բեղմնաւոր աշխատութիւնով ար-

ժանացել է ընդհանուր ուշադրութեանը և լարգանքին: Հակառակ նախկին որոշման, հանդէսը կատարւեց ուսումնարանի բազում, որը, շնորհիւ պ. պ. Ս. Բաղիրանցի և Պ. Ղուկասեանցի, զարդարած էր մեծ ճաշակով: Արեւից պաշտպանելու համար, բազը վերեւից ծածկւած էր բրնձիկներով, պատերից խփւած էին խալիներ և դրօշակներ. տեղ տեղ դրւած էին ծաղիկներ. բազի մէջտեղում կարգ կարգ շարւած էին աթոռներ՝ հանդիսականների համար. ուղիղ նոցա դիմաց պատից կախւած էին հանգուցեալ կալսր Աղէքսանդր II և Ներկալ Թագաւոր Ալէքսանդր III-ի մեծադիր պատկերները և նմանապէս Մակար Կաթողիկոսի: Նոյնպէս և հանգուցեալ հիմնադիր անդամների պատկերները: Այստե՛ս, որ հանգուցեալ հիմնադիր Ռոստոմեանցի մեծադիր պատկերը իւր ժամանակին չը հասաւ. նա պատւիրւած է Պետերբուրգում և արժէ 150 ռ.: Պատշգամբի մի մասում դրւած էին աթոռներ հիմնադիր և խորհրդական անդամների համար և մի ամբիոն՝ ճառախօսների համար: Բրոշւած ծրագրի համաձայն՝ նախ կատարւեց պատարագ և մօլեքին Ներկալ կալսր Աղէքսանդր III-ի համար և ապա հոգեհանգիստ հանգուցեալ հիմնադիր անդամների համար: Պատարագի ժամանակ հալը պատարագիչը մի կարճառօտ քարոզ խօսեց, որով թւեց Ընկերութեան արած ծառայութիւնները չօգուտ ազգի, չորդորեց ժողովրդին օգնել Ընկերութեան, նամանաւանդ շինութեան, որը սպասում է ժողովրդի օգնութեան, որպէս զի շինւի-վերջանալ, Եկեղեցական ծիսակատարութիւնը վերջացաւ ճիշդ ժամի 12-ին. ալեռահտե ժողովուրդը դիմեց ուսումնարանի բազը, ուր պիտի կատարէր հանդէսը: Բազի դուռը պահում էին մի քանի ուստիկաններ, որոնց պատւիրւած էր միայն կանանց թիւ տալ, իսկ տղամարդիկ կարող էին եկեղեցու բազից լսել: Շատերը աշխատում էին ուսումնարանից ներս մտնել, բայց քիչերին էր լաջողւում ալդ, աճտեղից էլ էին վճռուում. նոյն իսկ պատաւոր անդամներից ալսօրւալ օրը դրկւած են մասնակցելու ուրախութեան, ալն ինչ նոցա տեղը բռնած էին ալնալիսի մարդիկ, որոնք երբէք ոչ մի բանով չեն մասնակցել Ընկերութեան գործերին և ալսօր էլ ոչինչ պիտի քաղեն դանազան ընթերցումներից և ալս ամենը շնորհիւ լանձնաժողովի սխալ կարգադրութեան: Լսւում են աղաղակներ և տրտուջներ. ալդ ամենը մի կերպ խաղաղացնւում է: Պ. Կարա-Մուրզալի և հակական երաժշտական խմբերը բռնել են պատշգամբի վերալ իրանց պատշաճաւոր տեղերը: Պ. Կարա-Մուրզալի խումբը բաղկացած է 150 հոգուց՝ երկու սեռից: Հանդէսին պատեւ էին իրանց Ներկալութիւնով քաղաքադաւալը և մի քանի ալլաղի տիկիներ և պարոններ: Ժիշդ ժամի 12-ին բարձրանում է ամբիոն Ընկերութեան նախագահ պ. Անտօնեանցը. ամեն տեղ տիրում է լուրթիւն. նա մի քանի խօսքով բանում է հանդէսը. նորա ճառին հետեւում է ուսուց «Боже, царя храни» հիմնը. ամենքը ուրքի են կանգնում և դիւարաց ու ուսուցով ընդունում են երգը: Աճուհտե բարձրանում է ամբիոն Ընկերութեան անդամ և ատենադալի պ. Ա. Գալստեանցը և կարգում կարճառօտ տեղե-

կազիր Ընկերութեան 25-ամեայ գործունէութեան. Սա տեսում է $\frac{3}{4}$ ժամ. հասարակութիւնը ընդունում է ծափահարութեամբ. Անուհետև խումբը երգում է այդ օրւայ առիթով լորինւած հրգը, հեղինակութիւն պ. Ն. Ղուկասեանցի և երաժշտութիւն պ. Կարա—Մուրզալի. Եղանակը թողնում է հանդիսականների վերապ ամենաքաղցր տպաւորութիւն. պ. Կարա—Մուրզան ստանում է Ընկերութեան նախագահից իբրև ընծայ մի երաժշտական գաւազան ոսկեզօծ ծալրերով. Գորանից վետոյ կարդացւում են ստացւած հեռագիրներ, ուղերձներ և ոտանաւորներ. Զանազան կողմերից ստացել են 22 հեռագիր, 6 ուղերձ և 4 ոտանաւոր. Հեռագիրներից նշանաւոր է Մօսկւայից ուղարկւած Շահաղիդ—Կամսարականի բանաստեղծական հեռագիրը. Կարդացւելից և ասւելից մի քանի ճառեր, որոնք ընդունւում էին ծափահարութեամբ. ոտանաւորները և ճառերը ընդմիջւում էին երգերով:

Հանդէսը վերջացաւ ճիշդ ժամի երկուսին. Անուհետև հասարակութիւնը դիմեց ուսումնարանի դահլիճը՝ ձեռագործ իրողէնները տեսնելու և դնելու. Դահլիճը չքեղ կերպով զարդարւած էր գեղեցիկ ձեռագործ իրողէններով, որոնց հասարակութիւնը դնում էր ամենայն սիրով. Զեռագործների վաճառումից գոյացաւ 500 ր. աւելի. Նոյն օրը քաղաքային այգում կար ի պատիւ Ընկերութեան զբօսանք, որից գոյացաւ 1500 ր. աւելի:

Վերջացնելով խօսքս, չեմ կարող չը լատենել լարգելի Ընկերութեան քերմ ղգացումներս, ցանկանալով նորան երկար տարիներ ղուլութիւն չօգուտ աղգի:

Ա. ԶԼԻՑԵԱՆՑ

Բաքու:

Դնում ենք ալտեղ ստացած հեռագիրների և ուղերձների ցուցակը:
ԹԻՖԼԻՍԻՑ. Հալոց Բարեգործական Ընկերութիւնից, «Մուրճ»-ի, «Մշակ»-ի, «Նոր-Դար»-ի և «Արձագանք»-ի խմբագիրներից, Արիպտակէս սրբաղանից, Պեօշեանից (սա նւիրում է 100 օրինակ իւր հեղինակութիւններից), Մուրացանից, Շիրվանզադէից և Թիւսիկեանից:

ՊԵՏԵՐԲՈՐԴԻՑԻ. Եղեանից և Սանասարեանից միասին և «Արաքս»-ի խմբագրութիւնից:

ՄՈՍԿՈՒԱՅԻՑ. Շահաղիդ-Կամսարականից, Եղարաք Ժամհարեաններից և պ. Լիանօզեանից:

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ. Պ. Եղիշէ Նաբաթեանից:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ. Գաբրիէլ Ռամանովսկուց (որդեգիր):

ՍԱԼԵԱՆԻՑ, Բժիշկ Արամեանից, Իւզբաշեանից և Գարրիէլեանից, (գրած է
գրաբար՝ ռուսերէն տառերով):
ՂԱԶԱԽԻՑ, Պ. Ս. Ամիրեանցից:
ՓՕԹԻՑ, Պ. Աղէքսանդր Զաքարեանից:
ՂՈՒԲԱՅԻՑ, Բժիշկ Զալեանից:

Ո Ւ Ղ Ե Ր Զ Ն Ե Ր

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ, Գեղապետ Իւզբաշեանցից:
ԴԵՐԲԵՆԴԻՑ, Օր. Եղիսաբէթ Զուարեանից:
ՍԱԼԵԱՆԻՑ, Բժիշկ Գարրիէլ Յովհաննիսեանից:
ԲԱԳՈՒԱՅ րէալական դպրոցի ուսուցիչ Азизов-ից:
ՇԱՄԱՆՈՒՑ, Մակար վարդապետ Բարխուդարեանից, և
(Բագուի) Գրիգոր քահանայ Գրիգորեանից:
Բացի դոցանից, ստացւած են և չորս ոտանաւորներ, որոնցից երեքը
տեղույս րէալական դպրոցի աշակերտներից են, իսկ մէկը Ննպի համալ-
սարանի ուսանող Արշակ Տէր-Միքէլեանցից:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐԶԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Կովկասեան Կառավարչապետն ուղարկել է պ. պ. Նահանգապետնե-
րին հետեւեալ շրջաբերականը 1889 թ. Ապրիլի 16-ից № 3716:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակարի չարուցած միջնորդութեան
համաձայն՝ բացատրելու ալն խնդիրները, որոնք վերաբերում են հայ-լու-
սաւորչական կրօնի դաստաւութեանը պետական ուսումնարանների մէջ,
ինչպէս և 1884 թ. փետրւարի 16-ին հրատարակւած կանոններին հայ-լու-
սաւորչական ծխական ուսումնարանների մասին և այդ կանոնները լրաց-
նող բացատրութիւններին, որոնք չափուած են Կովկասեան երկրի պ. պ.
Նահանգապետներին և գլխավորներին 31 մարտի 1886 թ. № 3217-ով ուղ-
ղած իմ շրջաբերականով, Թաղաւոր Կալսրը, այդ հարցերի մասին կալա-
ցած առանձին խորհրդակցութեան արձանագրութեան ամենահպատակ զե-
կուցման համաձայն, անցեալ մարտ ամսի 22-ին բարեհաճեց Բարձրագոյն
հրամայել:

1) Թուլատրել, ժամանակաւորապէս, մինչև որ կը կապանալ այդ մա-
սին մի առանձին կարգադրութիւն, ժողովրդական լուսաւորութեան մի-
նիստրի, ներքին գործերի մինիստրի և Կովկասեան Կառավարչապետի հա-
մաձայնութեամբ, հայ-լուսաւորչական դաւանութեան կրօնապիտուկեան
դաստաւութիւնը Կովկասեան ուսումնարանական շրջանի միջնակարգ դրպ-
րոցական հաստատութիւնների մէջ՝ հայերէն լեզուով: